ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 15.08.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/52

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի

Մասնակցությամբ «Կոպի Սերվիս» ՍՊԸ-ի տնօրեն Մ.Բաղդասարյանի (պետական գրանցման վկայականի համար 033665)

Քննելով «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կարիքների համար համակարգչային տեխնիկայի, պատճենահանման սարքավորումների և օժանդակ նյութերի, բարձրախոսի, սեղանի էլեկտրատաքացուցիչի և մարտկոցների ձեռքբերման նպատակով հայտարարված ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-69/19 ծածկագրերով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում «Կոպի Սերվիս» ՍՊԸ-ի կողմից 17.07.2019թ. ներկայացված և 18.07.2019թ. վարույթ ընդունված բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2019/52 բողոք) և կից փաստաթղթերը՝ պարզեցի հետևյալը.

1. «Կոպի Սերվիս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Կոպի Սերվիս» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 17.07.2018թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-69/19 ծածկագրերով գնանշման հարցման ընթացակարգի 14-րդ չափաբաժնով նախատեսվել է ձեռք բերել քանոն ԻՌ 2204Ն (Canon IR 2002N) լազերային մոնոխրոմ ֆունկցիոնալություն-տպիչ, սկաներ, բազմացնող սարք Ա3 ֆորմատի, երկկողմանի տպագրությամբ: Քանոն ԻՌ 2004Ն (Canon IR 2004N) կամ Քանոն ԻՌ 2002Ն (Canon IR 2002N), որոնց համար օգտագործվում է (C-EXV42 Toner) քարթրիջ, տպման արագությունը 22 էջ/րոպ.: Առաջին էջի տպման ժամանակը՝ 7.4 վրկ., տպման ռեսուրսը ոչ պակաս 10200 էջ կամ համարժեք:

Ընկերությունը հայտնել է, որ 25.06.2019թ. թիվ 5 և 28.06.2019թ .թիվ 6 արձանագրությունները պարունակում են հակամրցակցային տրամաբանություն: Պահանջվում է մասնագիտական և առարկայական վերլուծություն:

Ընկերությունը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել է քննել 25.06.2019թ. թիվ 5 և 28.06.2019թ .թիվ 6 արձանագրությունները և հայտի 14-րդ չափաբաժնով պահանջները և Ընկերության առաջարկի համարժեքությունը և նշված արձանագրությունների համապատասխանությունը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ մասերի և 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 5-րդ,6-րդ, 7-րդ և 8-րդ մասերի պահանջներին:

«Կոպի Սերվիս» ՍՊԸ-ի տնօրենը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 22.07.2019թ. ժամը 10:25-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր մասնակցությունը, ով պնդել է բողոքով ներկայացված դիրքորոշումը:

2. «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

«ՀԱԷԿ» ՓԲԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել հետևյալը.

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից ս/թ հունիսի 5-ին հրապարակվել է ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-69/19 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որով կայանի կարիքների համար ձեռք են բերվելու համակարգչային տեխնիկա, պատճենահանման սարքավորումներ և օժանդակ նյութեր, բարձրախոս, սեղանի էլեկտրատաքացուցիչ և մարտկոցներ:

ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-69/19 ծածկագրով ընթացակարգի հայտերի ներկայացման համար սահմանված վերջնաժամկետին ներկայացվել են հայտեր հետևյալ կազմակերպությունների կողմից՝ «Կոմպյուտեր Սերվիս» ՍՊԸ, «Կոպի Սերվիս» ՍՊԸ, Ա/Ձ Արտյոմ Սահակյան, «Մարինե-99» ՍՊԸ և «Նորմա-պլյուս» ՍՊԸ: Գնահատող հանձնաժողովի 12.06.2019թ ժամը 11:00-ին հրավիրված հայտերի գնահատման նիստը կասեցվել է՝ «Կոպի Սերվիս» ՍՊԸ-ի հայտում տեղ գտած անհամապատասխանության պատճառով (Հավելված 1-ում նշված չէ իրական շահառուի հայրանունը), հնարավորություն տալով մասնակցին շտկել արձանագրված անհամապատասխանությունը: Սահմանված ժամկետում մասնակցի կողմից շտկվել է արձանագրված անհամապատասխանությունը, ինչի արդյունքում գնահատող հանձնաժողովի 17.06.2019թ ժամը 11:00-ին հրավիրված նիստի ընթացքում վերջինիս հայտը գնահատվել է բավարար և թիվ 14 չափաբաժնով «Կոպի Սերվիս» ՍՊԸ-ն ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակից:

Համաձայն ՀՀ կառավարության թիվ 526-Ն առ 04.05.2017թ որոշման 43-րդ կետի 4-րդ ենթակետի, «Կոպի Սերվիս» ՍՊԸ-ն երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացրել է սույն ընթացակարգի հրավերով սահմանված, իր կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համաձայն հավելված N 3.1-ի, ըստ որի թիվ 14 չափաբաժնով պահանջվող Տպիչ-բազմաֆունկցիոնալ Քանոն ԻՌ 2204Ն (Canon IR 2204N) Լազերային մոնոխրոմ ֆունկցիոնալություն - տպիչ, սկաներ, բազմացնող սարք Ա3 ֆորմատի, երկկողմանի տպագրությամբ: Քանոն ԻՌ 2204Ն (Canon IR 2204N) կամ Քանոն ԻՌ 2202Ն (Canon IR 2202N) կամ Քանոն ԻՌ 2202 (Canon IR 2202) կամ Քանոն ԻՌ 2204 (Canon IR 2204), որոնց համար օգտագործվում է (C-EXV42 Toner) քարթրիջ, տպման արագությունը 22էջ/րոպ. առաջին էջի տպման ժամանակը՝ 7.4վրկ. տպման ռեսուրսը ոչ պակաս 10200էջ կամ համարժեքը>> ապրանքի փոխարեն

առաջարկել է «Տպիչ-բազմաֆունկցիոնալ սարք Konica Minolta bizhub 266 (A8A3021) լազերային մոնոխրոմ, ֆունկցիոնալություն - տպիչ, սկաներ, բազմացնող սարք A3 ֆորմատի, երկկողմանի տպագրությամբ, որի համար օգտագործվում է (TN-222 Toner, ռեսուրսը 12000 էջ), տպման արագությունը 26 էջ/րոպ., առաջին էջի տպման ժամանակը՝ 5 վրկ.: Կոմպլեկտավորված՝ OC-512 օրիգինալի կափարիչ, Toner TN-222 ռեսուրսը ոչ պակաս 12000 էջ և հոսանքի լար: Երաշխիք մեկ տարի՝ համաձայն երաշխիքային կտրոնի»:

Գնահատող հանձնաժողովը, 25.06.2019թ ժամը 11:00-ին հրավիրված՝ 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի գնահատման նիստի ընթացքում, արձանագրել է, որ հրավերում կա հստակ նախապայման, այն է՝ անհրաժեշտ է (C-EXV42 Toner) քարթրիջով աշխատող բազմաֆունկցիոնալ սարք: Առաջարկվող մոդել Konica Minolta bizhub 266 բազմաֆունկցիոնալ սարքի դեպքում նշված քարթրիջը կիրառելի չէ:

Պատվիրատուն նշել է. որ C-EXV42 Toner քարթրիջով աշխատող բազմաֆունկցիոնալ սարքի ձեռքբերման անհրաժեշտությունն առաջացել է, երբ խափանվել է օգտագործվող բազմաֆունկիցոնալ սարքը, որի համար արդեն իսկ ձեռք էին բերվել C-EXV42 Toner քարթրիջներ, հետևաբար այլ սարքի ձեռքբերումը տնտեսապես ձեռնատու չէ:

Առաջնորդվելով ՀՀ կառավարության թիվ 526-Ն առ 04.05.2017թ որոշման 47-րդ կետի պահանջներով, հանձնաժողովը որոշել է նիստը կասեցնել երեք աշխատանքային օրով, հնարավորություն տալով «Կոպի Սերվիս» ՍՊԸ–ին շտկել անհամապատասխանությունը:

«Կոպի Սերվիս» ՍՊԸ-ն շտկման փոխարեն ուղարկել է գնահատող հանձնաժողովին հասցեագրված գրություն, որտեղ նշել է, որ Bizhub 266-ն ավելի հզոր և շահավետ է, քան պահանջվող բնութագրով Canon բրենդի սարքը և պահանջում է շտկել մասնագիտորեն և տեխնիկապես չհիմնավորված նախապայմանը:

Գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Կոպի Սերվիս» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում շտկում չի կատարվել, ինչի արդյունքում, առաջնորդվելով ՀՀ կառավարության թիվ 526-Ն առ 04.05.2017թ որոշման 48-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջներով, հանձնաժողովը մերժել է մասնակցի հայտը և որոշել է թիվ 14

չափաբաժնով փաստաթղթեր ներկայացնելու պահանջ ներկայացնել 2-րդ տեղ զբաղեցրած մասնակից «Նորմա-պլյուս» ՍՊԸ-ին:

Բողոքաբեր անձի բողոքը անհիմն է և ենթակա է մերժման, քանի որ վերջինս մինչև հայտերի բացումը չի օգտվել օրենքով իրեն տրված իրավունքից և չի դիմել հրավերով պահանջվող ապրանքի վերաբերյալ պարզաբանում ստանալու խնդրանքով կամ չի բողոքարկել գնման առարկայի բնութագիրը կամ հրավերի պահանջները:

«ՀԱԷԿ» ՓԲԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 22.07.2019թ. ժամը 10:25-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ԳԲՔԱ-ՆԳ-2019/52 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲՔԱ-ՆԳ-2019/52 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կարիքների համար համակարգչային տեխնիկայի, պատճենահանման սարքավորումների և օժանդակ նյութերի, բարձրախոսի, սեղանի էլեկտրատաքացուցիչի և մարտկոցների ձեռքբերման նպատակով հայտարարվել է ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-69/19 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու՝ Ընթացակարգ):

2. Ընթացակարգի հրավերով նախատեսված գնման առարկաներից 14-րդ չափաբաժնի համար նախատեսվել է հետևյալ տեխնիկական բնութագիրը.

Հ/հ	Անվանումը	Տեխնիկական բնութագիրը
14	Տպիչ-բազմաֆունկցիոնալ	Քանոն ԻՌ 2204Ն (Canon IR 2204N) Լազերային մոնոխրոմ ֆունկցիոնալություն - տպիչ, սկաներ, բազմացնող սարք Ա3 ֆորմատի, երկկողմանի տպագրությամբ: Քանոն ԻՌ 2204Ն (Canon IR 2204N) կամ Քանոն ԻՌ 2202Ն (Canon IR 2202N) կամ Քանոն ԻՌ 2202 (Canon IR 2202) կամ Քանոն ԻՌ 2204 (Canon IR 2204), որոնց համար

		օգտագործվում է (C-EXV42 Toner) քարթրիջ, տպման արագությունը 22էջ/րոպ. առաջին էջի տպման ժամանակը՝ 7.4վրկ. տպման ռեսուրսը ոչ պակաս 10200 էջ կամ համարժեքը:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.06.2019թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընթացակարգի 14-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Կոպի Սերվիս» ՍՊԸ-ն:

4. «Կոպի Սերվիս» ՍՊԸ-ն «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-69/19» ծածկագրով ընթացակարգի մասնակցության հայտի թիվ N 3.1 հավելվածով գնման առարկայի համար ներկայացրել է հետևյալ տեխնիկական բնութագիրը.

Չ/Հ	Անվանումը	Տեխնիկական բնութագիրը
14	Տպիչ-բազմաֆունկցիոնալ սարք Konica Minolta bizhub	bizhub 266 (A8A3021) լազերային մոնոխրոմ, ֆունկցիոնալություն - տպիչ, սկաներ, բազմացնող սարք Ա3 ֆորմատի, երկկողմանի տպագրությամբ, որի համար օգտագործվում է (TN-222 Toner, ռեսուրսը 12000 էջ), տպման արագությունը 26էջ/րոպ., առաջին էջի տպման ժամանակը՝ 5 վրկ.: Կոմպլեկտավորված՝ OC-512 օրիգինալի կափարիչ, Toner TN-222 ռեսուրսը ոչ պակաս 12000 էջ և հոսանքի լար: Երաշխիք մեկ տարի՝ համաձայն երաշխիքային կտրոնի»:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 25.06.2019թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 5 արձանագրության 3-րդ կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ «Կոպի Սերվիս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում հրավերով նախատեսված բնութագրին, մասնավորապես հրավերով կա հստակ նախապայման, որ անհրաժեշտ է (C-EXV42 Toner) քարթրիջով աշխատող բազմաֆունկցիոնալ սարք: Առաջարկվող մոդել Konica Minolta bizhub 266 բազմաֆունկցիոնալ սարքի դեպքում նշված քարթրիջը կիրառելի չէ:

6. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշմամբ, Կարգի 47-րդ կետի համաձայն՝ նիստը երեք աշխատանքային օրով կասեցվել է և Ընկերությանը հնարավորություն է տրվել շտկելու արձանագրված անհամապատասխանությունը:

7. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 28.06.2019թ. ժամը 14:00-ի նիստի թիվ 6 արձանագրության 3-րդ կետով կայացված որոշմամբ «Կոպի Սերվիս» ՍՊԸ-ի հայտը մերժվել է այն հիմնավորմամբ, որ Կոպի Սերվիս» ՍՊԸ-ն շտկման փոխարեն ուղարկել է գնահատող հանձնաժողովին հասցեագրված գրություն, որտեղ նշել է, որ Bizhub 266-ն ավելի հզոր և շահավետ է, քան պահանջվող բնութագրով Canon բրենդի սարքը և պահանջել է շտկել մասնագիտորեն և տեխնիկապես չհիմնավորված նախապայմանը:

8. Գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Կոպի Սերվիս» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում շտկում չի կատարվել, ինչի արդյունքում, առաջնորդվելով Կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջներով, հանձնաժողովը մերժել է մասնակցի հայտը և որոշել է թիվ 14-րդ չափաբաժնով փաստաթղթեր ներկայացնելու պահանջ ներկայացնել 2-րդ տեղ զբաղեցրած մասնակից «Նորմա-պլյուս» ՍՊԸ-ին:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Կոպի Սեվիս» ՍՊԸ-ի 17.07.2019թ. բողոքը, «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի գրությունը և կից փաստաթղթերը, «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-69/19» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ ապրանքների գնման դեպքում իր կողմից

հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ՝ պայմանով, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով ներկայացնում է ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը՝ էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ:

Կարգի 47-րդ կետը սահմանում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթեր չներկայացվելու կամ ամբողջական չներկայացվելու կամ ներկայացված փաստաթղթերում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ, ներառյալ կոմիտեի տրամադրած տեղեկատվության հիման վրա, իսկ ապրանքների գնման դեպքում՝ նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Ընդ որում, եթե անհամապատասխանությունն արձանագրվել է կոմիտեից ստացված տեղեկատվության արդյունքում, ապա սույն կետում նշված ծանուցմանը կցվում է նաև այդ տեղեկատվությունը պարունակող փաստաթղթի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը:

Նույն կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կարիքների համար համակարգչային տեխնիկայի, պատճենահանման սարքավորումների և օժանդակ նյութերի, բարձրախոսի, սեղանի էլեկտրատաքացուցիչի և մարտկոցների ձեռքբերման նպատակով հայտարարվել է ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-69/19 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

Ընթացակարգի հրավերով նախատեսված գնման առարկաներից 14-րդ չափաբաժնի համար նախատեսվել է հետևյալ տեխնիկական բնութագիրը.

Հ/հ	Անվանումը	Տեխնիկական բնութագիրը
14	Տպիչ-բազմաֆունկցիոնալ	Քանոն ԻՌ 2204Ն (Canon IR 2204N) Լազերային մոնոխրոմ ֆունկցիոնալություն - տպիչ, սկաներ, բազմացնող սարք Ա3 ֆորմատի, երկկողմանի տպագրությամբ: Քանոն ԻՌ 2204Ն (Canon IR 2204N) կամ Քանոն ԻՌ 2202Ն (Canon IR 2202N) կամ Քանոն ԻՌ 2202 (Canon IR 2202) կամ Քանոն ԻՌ 2204 (Canon IR 2204), որոնց համար օգտագործվում է (C-EXV42 Toner) քարթրիջ, տպման արագությունը 22էջ/րոպ. առաջին էջի տպման ժամանակը՝ 7.4վրկ. տպման ռեսուրսը ոչ պակաս 10200էջ կամ համարժեքը:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել «Կոպի Սերվիս» ՍՊԸ-ն:

Հրավերով նախատեսվել է, որ մասնակիցը հայտի թիվ 1 հավելվածով ներկայացնում է հայտարարություն առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության մասին:

Ընկերությունը հայտի թիվ 1 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-69/19 ծածկագրով գնանշման հարցմանը մասնակցելու նպատակով իր կողմից ներկայացված դիմում-հայտարարությունում նշված չափաբաժնի (չափաբաժինների)

մասով առաջարկվող ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերը համապատասխանում են նույն հրավերի համապատասխան չափաբաժնում (չափաբաժիններում) նշված ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերի պահանջներին և պարտավորվում է առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը.

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.06.2019թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընթացակարգի 14-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Կոպի Սերվիս» ՍՊԸ-ն, որին ծանուցվել է երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը, այդ թվում՝ 3-րդ հավելվածով նախատեսված գրությունը, որին կցվում է իր կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համաձայն հավելված N 3.1-ի:

«Կոպի Սերվիս» ՍՊԸ-ն «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-69/19» ծածկագրով ընթացակարգի մասնակցության հայտի թիվ N 3.1 հավելվածով գնման առարկայի համար ներկայացրել է հետևյալ տեխնիկական բնութագիրը.

Չ/Հ	Անվանումը	Տեխնիկական բնութագիրը
14	Տպիչ-բազմաֆունկցիոնալ սարք Konica Minolta bizhub	bizhub 266 (A8A3021) լազերային մոնոխրոմ, ֆունկցիոնալություն - տպիչ, սկաներ, բազմացնող սարք A3 ֆորմատի, երկկողմանի տպագրությամբ, որի համար օգտագործվում է (TN-222 Toner, ռեսուրսը 12000 էջ), տպման արագությունը 26էջ/րոպ., առաջին էջի տպման ժամանակը՝ 5 վրկ.: Կոմպլեկտավորված՝ OC-512 օրիգինալի կափարիչ, Toner TN-222 ռեսուրսը ոչ պակաս 12000 էջ և հոսանքի լար: Երաշխիք մեկ տարի՝ համաձայն երաշխիքային կտրոնի»:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 25.06.2019թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 5 արձանագրության 3-րդ կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ «Կոպի Սերվիս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում հրավերով նախատեսված բնութագրին, մասնավորապես հրավերով կա հստակ նախապայման, որ անհրաժեշտ է (C-EXV42 Toner) քարթրիջով աշխատող բազմաֆունկցիոնալ սարք: Առաջարկվող մոդել Konica Minolta bizhub 266 բազմաֆունկցիոնալ սարքի դեպքում նշված քարթրիջը կիրառելի չէ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշմամբ, Կարգի 47-րդ կետի համաձայն՝ նիստը երեք աշխատանքային օրով կասեցվել է և Ընկերությանը հնարավորություն է տրվել շտկելու արձանագրված անհամապատասխանությունը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 28.06.2019թ. ժամը 14:00-ի նիստի թիվ 6 արձանագրության 3-րդ կետով կայացված որոշմամբ «Կոպի Սերվիս» ՍՊԸ-ի հայտը մերժվել է այն հիմնավորմամբ, որ Կոպի Սերվիս» ՍՊԸ-ն շտկման փոխարեն ուղարկել է գնահատող հանձնաժողովին հասցեագրված գրություն, որտեղ նշել է, որ Bizhub 266-ն ավելի հզոր և շահավետ է, քան պահանջվող բնութագրով Canon բրենդի սարքը և պահանջել է շտկել մասնագիտորեն և տեխնիկապես չհիմնավորված նախապայմանը:

Գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Կոպի Սերվիս» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում շտկում չի կատարվել, ինչի արդյունքում, առաջնորդվելով Կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջներով, հանձնաժողովը մերժել է մասնակցի հայտը և որոշել է թիվ 14-րդ չափաբաժնով փաստաթղթեր ներկայացնելու պահանջ ներկայացնել 2-րդ տեղ զբաղեցրած մասնակից «Նորմա-պլյուս» ՍՊԸ-ին:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-69/19» ծածկագրով ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագիրը 14-րդ չափաբաժնի մասով, «Կոպի Սերվիս» ՍՊԸ-ի՝ Ընթացակարգի հրավերի 3.1 հավելվածով ներկայացրած տեխնիկական բնութագիրը, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությունը սահմանում է, որ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում

է ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին ***համապատասխանության*** վերաբերյալ:

Հրավերով նախատեսվել է, որ մասնակիցը հայտի թիվ 1 հավելվածով ներկայացնում է հայտարարություն առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության մասին: Ընթացակարգին մասնակցության հայտ ներկայացրած «Կոպի Սերվիս» ՍՊԸ-ն հայտի թիվ 1 հավելվածով հայտարարել և հավաստել է, ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-69/19 ծածկագրով գնանշման հարցմանը մասնակցելու նպատակով իր կողմից ներկայացված դիմում-հայտարարությունում նշված չափաբաժնի (չափաբաժինների) մասով առաջարկվող ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերը համապատասխանում են նույն հրավերի համապատասխան չափաբաժնում (չափաբաժիններում) նշված ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերի պահանջներին: Միևնույն ժամանակ Ընկերության կողմից հայտի թիվ 3.1 հավելվածով ներկայացվել է իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիր, որը չի համապատասխանում հրավերի տեխնիկական բնութագրին, մասնավորապես՝ «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-69/19» ծածկագրով ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրի 14-րդ չափաբաժնով ***կա հստակ նախապայման, որ անհրաժեշտ է (C-EXV42 Toner) քարթրիջով աշխատող բազմաֆունկցիոնալ սարք, մինչդեռ Ընկերության կողմից առաջարկվող Konica Minolta bizhub 266 բազմաֆունկցիոնալ սարքի դեպքում նշված քարթրիջը կիրառելի չէ***:

Ինչ վերաբերվում է ԳԲՔԱ-ՆԳ-2019/52 բողոքի քննության նպատակով հրավիրված նիստի շրջանակներում Ընկերության կողմից ներկայացված այն դիտարկմանը, որ Ընթացակարգի հրավերով նշված C-EXV42 Toner քարթրիջը կիրառելի է միայն Հրավերով պահանջվող Canon IR 2204N և Canon IR 2202N մոդելներին և չկա այլ համարժեք տպիչ, որին կիրառելի կլինի հրավերով նշվող C-EXV42 Toner քարթրիջը, ապա սույն մասով արձանագրում եմ, որ «Գնումների մասի» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ եթե **բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է՝ գնման առարկայի բնութագրերը**, նախաորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները, **ապա բողոքը ներկայացվում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը**,

մինչդեռ՝ արձանագրում եմ, որ Ընկերության կողմից մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը ոչ Ընթացակարգի հրավերով սահմանված պահանջների և ոչ էլ գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ բողոք չի ներկայացվել, ավելին՝ Օրենքի 29-րդ հոդվածի համաձայն՝ մասնակիցն իրավունք ունի պատվիրատուից պահանջել հրավերի պարզաբանում, որը ևս Ընկերության կողմից չի պահանջվել, իսկ վիճարկվող բողոքը ներկայացվել է հայտերը բացվելուց հետո:

Այսպիսով, գտնում եմ, որ «Կոպի Սերվիս» ՍՊԸ-ի կողմից 17.07.2019թ. ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Կոպի Սերվիս» ՍՊԸ-ի կողմից 17.07.2019թ. ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**